4- Je te plumerai le cou (2x)

Et la tête (2x) et les yeux (2x)

Et le bec (2x) alouette (2x) o'h.

5- Je te plumerai les oul's

6- Je te plumerai les dos

7- Je te plumerai les potts.



ԱՐՏՈՒՏԻԿԸ

CHINGARONGA

Արտուտիկը, սիրուն արտուտիկը
Արտուտիկը, ես քեզ պիտ' փեթթեմ
Գլուխդ պիտի փեթթեմ (2x)
Գլուխդ (2x) Փորիկդ (2x)
Տոտիկդ (2x) Մազերդ (2x)
Օ՛

Chingaronga, Chinga, Chinga, Ronga
Chingaronga, Chinga, Chinga, reh.
Chinga - Chinga - Chinga reh
Chinga - Chinga - Chinga roh
Chinga reh (2x) Chinga roh (2x)
Oh



L'ALOUETTE

L'alouette est sur la branche (2x)

Fait un petit saut l'alouette l'alouette

Fait un petit saut l'alouette

comme il faut.

Faites nous la révérence (2x)

Fait un petit saut l'alouette l'alouette

Fait un petit saut l'alouette

comme il faut.

L'assistant est sur la branche (2x)

Fait un petit saut l'assistant l'assistant

Fait un petit saut l'assistant comme il faut.

ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԿԱՆՉԵՐ

Սկաուտական կանչերը կ'ըլլան խումբով, բարձր ձայնով, արագ եւ կտրուկ: Բոլոր սկաուտները միասին պէտք է սկսին եւ միասին արտասանեն իւրաքանչիւր բառ: Խիստ հազուագիւտ պարագաներ կան, ինչպէս լաւապէս ընտրուած կանչերը, կրնան ստեղծել ոգեւորութիւն:

Իւրաքանչիւր խմբակ պէտք է ունենայ իր յատուկ կանչը: Տղաք պէտք է քաջալերուին՝ փորձելով իրենք ստեղծեն նոր կանչեր, որուն գծով պէտք է բազմաթիւ փորձեր կատարուին եւ խումբը միշտ ոգեւորիչ ըլլայ խմբակային թէ սկաուտական ընդհանուր հաւաքներու ընթացքին: Կանչերը պահպանելու եւ չմոռնալու համար, զանոնք հասկնալի գիրով գրել կամ տպել անջատ թղթիկներու վրայ եւ հաւաքել կանչերու յատուկ տուփիկի մէջ, որ կարելի է տանիլ բանակումներու, խարուկահանդէսներու կամ խմբակային ժողովներու:

Ստորեւ կու տանք կարգ մը խմբակային կանչեր, որոնք հաւանաբար օգնեն սկաուտապետերուն՝ հետաքրքրութիւն ստեղծելու սկաուտութեան այս հատուածին մէջ նոյնպէս:

🔊 L-E-B-A-N-O-N
Lebanon, Lebanon!
Ya Libnan!

🔊 «Պ»իա - «պ»իա «Պէյրութ»էն
«Հ»իա - «հ»իա «Հալէպ»էն
«Պէյրութ»էն - «Հալէպ»էն
Հ.Մ.Մ.ի սկաուտները ձեզ կը բարեւեն:
(Քաղաքներու անունները կրնանք փոխարինել այլ շրջաններու անուններով):

ՖԲԱՆՍԱԿԱՆ

🔊 Adidgi, Adidgi, Ah ou ah!
Adidgi, Adidgi, zim, bom, bah!
Ah ou ah, zim bom bah!
Ah! Ah!! A-a-a-ah!!!
(Վերջին Ահ-ը գոչել փուչիկէն փախած օդի նման ձայնով)

🔊 Adidgi, Adidgi, Ah ou ah!
Adidgi, Adidgi, zim, bom, bah!
Ah ou ah, zim bom bah!
Հ.Մ.Մ.ի սկաուտները հոս են ահա:

❶ Չիքիլիքա, չիքիլիքա, չօ - չօ - չօ,
 Պօպիլիքա, պօպիլիքա, պօ - պօ - պօ,
 Չիքիլիքա - պօպիլիքա,
 Պօպիլիքա - չիքիլիքա,
 Զիմ պոմ պա
 Հ.Մ.Մ.ի սկաուտները հոս են ահա:

❶ Ձապետի ձապետի ձապ - ձապ - ձապ
 Խոպետի խոպետի խոպ - խոպ - խոպ
 Ձապետի - խոպետի
 Խոպետի - ձապետի
 Խոպձա խոպձաներ
 Հ.Մ.Մ.ի սկաուտներ:

❶ Ռիբ ռիբ ռիբ
 Արահիբ արահիբ արահամա
 Քահինե քահինե քահինե քահա
 Հ.Մ.Մ.ի սկաուտները հոս են ահա:

❶ Չուքալիքա, չուքալիքա, չում - չում - չում,
 Պումալիքա, պումալիքա, պում - պում - պում,
 Չուքալիքա, պումալիքա,
 Զիմ պոմ պա
 Հ.Մ.Մ.ի սկաուտները հոս են ահա:

❶ C'est le chef - chef - chef
 C'est le troupe - troupe - troupe
 C'est le chef - c'est le troupe
 C'est le chef de troupe.

❶ C'est le ca - ca - ca
 C'est le pi - pi - pi
 C'est le ca - c'est le pi
 C'est le capitaine.

❶ C'est le Ho - Ho - Ho
 C'est le men - men - men
 C'est le Ho - c'est le men
 C'est le Homenmen.

❶ أنا بحبك من قلبي
 هو هو هومنمن
 يا هومنمن يا حبي
 هو هو هومنمن
 لو غبتي عني تكة
 هو هو هومنمن
 قلبي بيوجعني بقوة
 هو هو هومنمن
 القائد ----- شو بحبو
 هو هو هومنمن
 ويلي ما أطيب قلبو
 هو هو هومنمن

« C'est le up - up - up
C'est le ün₁ - ün₁ - ün₁
C'est le up, C'est le ün₁
C'est le u-ṛṛ-ün₁:

« C'est le for - for - for
C'est le mi - mi - mi
C'est le for, c'est le mi
C'est le formidable
C'est "one" midable
C'est "two" midable
C'est "three" midable
C'est "four" midable

« Tanak A - A - A
Tanak you - you - you
Tanak A, tanak you
Thank you, thank you, thank you.

ԴԱՆԻԱԿԱՆ ԾԱՓ

« B - R - A - V - 0!
Bravo! Bravo! Bravo!

ՀՈԼԱՆՏԱԿԱՆ

« Ric! tic! Ric-a-tic-a-tic!
Hopsa! Hopsa! Hie!
(Կրկնել 3 անգամ)

ԱՆԳԼԻԱԿԱՆ

« Դեկավար.. Who are we?
Խու՜ր.. We are the boys who make no noise!
Hoo-ha! Hoo-ha-ha!
Hoo-ha! Hoo-ha! Hoo-ha-ha!
F-I-V-E! Five ! (կամ այլ խմբակի անուն).

« Be prepared! Be prepared!
Shout! Shout! Shout!
Tenderfoot! Second Class!
First Class Scout!

« آه ما أحلى الكشفية
آه ما أحلى الكشفية
أغاني و بسط و كيفية
بتعلم حب الاوطان
أغاني صدق و إيمان
قولوا للعالم قولوا
وعن الكشفية اشرحولوا
و بعدين تعوا غنولوا

آه ما أحلى الكشفية
لما نحن بالشوادر
مثل النمل على الببادر
و حامينا الرب الأقدر
آه ما أحلى الكشفية

ما أحلى الكشفية
ما أحلى الكشفية جد وحرية
خيمة مننصبها ونار منشعلها
حرس ودورية وكلمة سرية
شمال منط وأغاني بالعربية
ومن قوم ومنرقص ومنغني
ما أحلى الكشفية

ونومة عالارض يا عيوني نومة هنية

Who are we? Who can guess? Boy S-C-0-U-T-S!
Boy Scouts! Boy Scoutst
Yes! Yes! Yes!

Karaborrah-karaborrah! Sis-boom-bah!
Chingareta-chingareta! Ah-ooh-ah!
Zip-zum! Zip-zum! Zip-zum-zee!
Eagles! Eagles! Yes, sire-ee!

Boom-a-racket! Cheese-a-racket!
Sis-boom-bah!
Silent Panther! Rah! Rah! Rah!

Rah-rah-rah! Mud or dust!
We're the Otters! Shout we must!

Skinna-ma-rink! Skinna-ma-ree!
Who likes our Patrol? We! We! We!

Yokka-doola! Hicka-hoolal Yokka-doola-day
Yell for the Arrows! Hip-hip-horray!

Breketex! Koax! Koax!
Breketex! Koax!
Alala! Alala!
Siss-s-s! Boo-oo-m! Beavers!

Hobble-Gobble! Razzle-dazzle! Sis-boom-bah!
Lenapes! Lenapes! Rah-rah-rah!

We've done fine! We've done well!
Now for an ear-drum splitting yell!
Panthers! Panthers! Panthers!

Razzle-dazzle! Never frazzle! Not a thread but wool!
All together, all together!
That's the way we pull!
Buffaloes!

Boom-a-lacka! Boom-a-lacka! Bow-bow-bow!
Ching-a-lacka! Ching-a-lacka! Chow-chow-chow!
Boom-a-lacka! Ching-a-lacka! Who are we?
We're the Foxes! Can't you see? ! !

كاف على شين
شين على ألف... ألف على فاء
كشاف... كشاف... كشاف

Flee
Flee - fly
Flee - fly - flow (x2)
Fiste
Oumalama (x3) } (2x)
Fiste
Ooooooh } (2x)
No, no, no-no-no
Fiste
Ini - mini outsolini } (2x)
Oowasho alamini
Achi-kachou } (2x)
Imma bella
Achi kachou

طلعنا على الجبال
نزلنا على الوديان
سألونا انتو مين
قلنا الكشافية
يا كشفية، يا حركة قوية
يا حركة مطوية، يا كشفية
قولوا للقيادي نحن جينا
نحن جينا، نحن جينا
اصرخوا، اصرخوا
الكشاف دايما مستعد

🦫 Karo-keero-kiro-kee! (Or Kore, kive, kate, etc.)
Rah-rah-rah for Forty-Three! (Or four, five, eight, etc.)

🦫 Tutti-Frutti! Punch and Judy!
Beaver Patrol will do its duty!
Don't you worry! Don't you fret!
Beaver Patrol will get you yet!

🦫 Chee-hee! Chee-hee! Chee-ha-ha-ha!
Bob Whites! Bob Whites! Rah, rah, rah!

🦫 Էլաշիպա Էլաշիպա չա
Քոմեյինի քոմեյինի
Չինքո չինքո չինքո
Աչինքո էսաքամայօ, արամայօ էսակորա
Ակորա ակորա ակորա:

🦫 Thunder, Thunder, Thunderation,
We are the Girl Scout Association
When we work with determination
We create a sensation

[Repeat, going faster each time]

🦫 A la mer - mer - mer
A la ci - ci - ci
A la mer, à la ci
A la merçi.

🦫 Մա - մա - մա
Շա - շա - շա
Լա - լա - լա
Մաշալլա

🦫 Bra - bra - bra
Vo - vo - vo
Bravo

🦫 Ex - ex - ex
Tra - tra - tra
Extra

🦫 Whiski wi - wi
Whaska wa - wa
Zim bom ba
Cou-cou.

🦫 Good
Very good
Very very good
Phenominal

🦫 Ռամզի քալոչչա
Իմմա պէլլա
Հա-հա-հա
Եամանի եամանօ (3x) Հա՛:

🦫 Թակ մակըն թակ
Թուզըն թուզըն թակ:

«» Հիմ գիմ գամ գա (2x)

Ձի զու գա
Ագա զու գա
Կագուգա:

«» Ձիկ գակ, զիկ գակ

Հէյ տոււմ տոււմ
Ձիկ գակ, զիկ գակ
Հէյ տոււմ տոււմ (2x):

«» Թիայա թիայա թիայա ho (2x)

Իահո իահո
Թիայա թիայա ho:

«» يا كشافين يلا تعالوا او يو يو يو

بالزى الكشفي يلا اجمعوا او يو يو يو
الجمع صفا طبعا عارفينه او يو يو يو
ومنديكم دايمًا حظينه او يو يو يو
وشعاركم دايمًا حظينه او يو يو يو
موجود فى قلبكم وسمعينه او يو يو يو

«» Ձիմ քապոթ զիմ քապոթ

Ձիմ քապոթ քապոթ քապոթ:

«» Արիք բօք բիք (2x)

Պէտնէ պաուսէ, պէտնէ պաուսէ, (3 անգամ համբոյրի ձայն հանել)
Պէտնէ զէքֆէ, պէտնէ զէքֆէ, (ծափ-ծափ-ծափ)
Պէտնէ տահքէ, պէտնէ տահքէ, հա-հա-հա
Պէտնէ էքլէ, պէտնէ էքլէ, եամ-եամ-եամ:

«» Արարա պաչչի պաչչի պաչչի

Իսսիմիօրա միօրա միօրա
Աքարա ռամպօ ռամպօ ռամպօ
ԺաուաՅունա Յունա Յունա
Սէ քաՅունա մունա մունա
Պէտնէ Pepsi ֆըշշ Pepsi
Պէտնէ Mirinda հըմմ Mirinda.

«» Էլվիվօ Էլվավօ

Էլվիվօ վավօ վու
Հէ՛յ լիֆֆի լիֆֆի
Խիարաու մըրքի
Քուսաու մը7շի
Եամ եամ եամ:

«» Ստորեւ արձանագրեցէք կանչ մըն ալ ձեր կողմէ...

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ-ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԵՐԳԵՐ

Հայ յեղափոխական երգերը մեր ժողովուրդի ծայնն են: Ակնարկ մը նետելով մեր դարաւոր պատմութեան, մեր հողին ու ջուրին՝ յստակօրէն կարելի է տեսնել այն ակունքները, ուր հոսած է հայ ազգի յեղափոխական երգերու շարանը:

Ծնշուած ժողովուրդի քաջութեան, արդարութեան ու պայքարի դաշոյնը կը ներկայացնէ մեր ազգային յեղափոխական երգերու փունջը: Նոյնիսկ եթէ անծանօթ կը մնանք մեր պատմական իրադարձութիւններուն, կարդալով, լսելով ու երգելով՝ մեր զարկերակներու մէջ կ'արթննան այն հայրենասիրական զգացումները, կարօտն ու ազատութեան տենչը, որ ունեցած են մեր նախնիներն ու մեր հերոսները:

18-րդ դարը ինչպէս Եւրոպայի, քիչ մը աւելի ուշ, հրաշքի նման մեր էլ լուսատրութեան դարը եղաւ: Արեւմտեան Հայաստանը Եւրոպային աւելի մօտ ըլլալով՝ կարողացաւ յարաբերիլ ու օգուտներ քաղել անոր լուսատրութենէ: Հայի ազգային գիտակցութիւնը, եւրոպական լուսատրութեան հետ շփումն ու անոր ընկալումը՝ հայութեան առաջնորդեցին դէպի արթնութիւն, ազգային ինքնաճանաչում, պահանջատիրութիւն, վերածնունդ (1715-1852) եւ ազգի հիմնաքարը եղող Հայոց Ազգային Սահմանադրութիւն (1860, Մայիսի 24):

Այս շրջանին ռուսահայերն ու քիչիսահայերը եւս սկսան ապրիլ իրենց վերածնունդի սկիզբը: Հակառակ ծանր կշռող օտար լուծերու (թուրք, պարսիկ եւ ռուս) ահաւոր ճնշումներու, հայի կեանքի սարսափելի կացութիւններու, հրաշքի նման ծաղկեցաւ մշակոյթը՝ իր գլխաւոր բնագաւառներով՝ գրականութիւն, թատրոն, երաժշտութիւն եւ այլն: Բոլորն ալ ժողովուրդի ազգային գիտակցութիւնն ու հայրենասիրական հպարտութիւնը հրահրելու վսեմ ու նուիրական նպատակով: Այս բոլորը կ'իրականանար նոյնիսկ մահուան գնով:

Հայր Դեմոն Ալիշան, Սյրտիչ Պեշկեպաշեան, Խրիմեան Հայրիկ եւ ուրիշներ իրենց ազգաշունչ գրութիւններու պատճառով՝ թուրք պետութեան կողմէ անբաղձալի տարր կը համարուէին: Իսկ արեւելահայութեան մէջ Մեսրոպ Թադիաղեան, Խաչատուր Աբովեան, Գամառ Քաթիպա, Միքայէլ Նալպանտեան, Շուշանիկ Կիւրդիեան, Սմբատ Շահազիզ եւ ուրիշներ իրենց ազգաշունչ բանաստեղծութիւններով եւ թարգմանական գործերով երգեցին հայի վիշտը, արցունքը, տրտմութիւնը, խռովքն ու ազատագրութիւնը:

19-րդ դարէն սկսեալ՝ ինչպէս արեւմտահայութիւնը զոհ կ'երթար Սուլթան Համիտ Բ.-ի հայատեաց քաղաքականութեան, քիչիսահայութիւնն ալ զոհ կ'երթար Ռուսիոյ փոխարքայ, նոյնքան հայատեաց իշխան Գոլիցինի ռուսացման ծրագիրներուն՝ 300 դպրոցներու փակում, հայ մամուլի խիստ գրաքննութիւն, ազգային կալուածներու բռնագրաւում, հայ գիւղերու քանդում, յեղափոխական գործիչներու բանտարկում, մահապատիժ եւ այլն:

Հայ ժողովուրդը ամէնուրեք՝ անասելի ճնշումներու տակ էր: 1846-1909 թթ. Սայաթ Նովայէն յետոյ մեր մեծագոյն աշուղը Աշուղ Զիւանիկն էր, որ յօրինեց ու երգեց հայ ժողովուրդի ամենադառն ու ամենաճակատագրական, ազգային զարթօնքի, ազատագրական եւ յեղափոխական շարժումներու երգերը: Ասոնք հանդիսացան մեր ազգային զարթօնքի շեփորահարները: Այսպիսի պատկառելի անձնաւորութեանց հայրենասիրական ըմբոստ եւ պայքարի շունչով ու ոգիով գրուած բանաստեղծութիւններն ու երգերը անհուն ոգետութիւն ստեղծեցին ժողովուրդի մէջ:

Անմոռանալի երգեր են «Զարթիր Որդեակ»ը, «Կիլիկիա», «Պլպուլն Աւարայրի», «Լեռց. Ամպերը», «Կեցցէ՛ Զէյթուն», «Ձայն Սը հնչեց Էրզրումի», «Մայր Արաքսի Ափերով», «Հայ Ապրինք», «Հիմի՞ Էլ Լեռնք», «Ահա՛ Ծագեց Կարմիր Արեւ», «Ձայն Տուր, Ով Ծովակ», «Ազատն Աստուած», Անդրանիկին՝ «Իբրեւ Արծիւ սաւառնում ես լեռ ու ժայռ...»... եւ այլն:

Այս ազատագրական երգերու ոգեւորութիւնը փոխելով հայի հոգեբանութիւնը՝ 19-րդ դարը անոր համար դարձաւ ազատագրական եւ հայրենակերտման ճգնաժամ դար եւ բնորոշուեցաւ «Հայը Հայաստանին, Հայաստանը հային» լոզունգներով: Այս երգերով հայ ժողովուրդի մէջ արթնցաւ ազգային-ազատագրական գիտակցութիւնն ու զէնք կրելու քաջութիւնը: Սա էր կարեւորը, որովհետեւ թուրքի 500 տարուայ լուծը հայ երիտասարդէն իսկած էր անոր քաջասրտութիւնը, արիւթիւնն ու ըմբոստանալու ոգին: Այս էր այդ օրերու վիճակը, երբ տեղի տուաւ 1862 թ. Զէյթունի առաջին յեղափոխական ապստամբութեան, որ եղաւ քաջութեան, ազատասիրութեան եւ հայրենասիրութեան օրինակ ու ծառայեց ոչ միայն քրքական լուծի տակ հեծող արեւմտահայերու, այլ ամբողջ հայ ժողովուրդի համար:

Այո՛, Զէյթունի ապստամբութիւնը հայ ազատագրական շարժման փառաւոր դրագներէն է: Մեծ եղած է այդ ապստամբութեան նշանակութիւնը՝ հայ ժողովուրդի ազգային ինքնագիտակցութեան բարձրացման համար: Զէյթունի հերոսական օրինակը երկար տարիներ ոգեշնչած է եւ ազատագրական պայքարի հանած մեր ժողովուրդին:

Նաեւ Խանասորի յաղթական արշաւանքի առթիւ գրուեցան ազատագրական երգեր՝ «Գարահիսար Լերան Լանջին» եւ «Կարկուտ Տեղաց Խանասորայ դաշտումը», Սասնայ լեռների եւ Մշոյ դաշտի պատերազմն ու Արաբոյին նուիրում «Խուժան Ասկեար» երգերը յաւէտ վառ կը մնայ հայ ժողովուրդի հոգիին մէջ, որովհետեւ այդ է մեր պատմութիւնը:

Եւ վերջապէս, հայոց պատմութիւնն ու հայի նկարագիրը ներկայացնող այս յեղափոխական երգերու ազդեցութիւնն էր, որ աւելի ուժ ու ափսոսման մատակարարեց մեր ֆիտայիներուն ու զինուորներուն՝ Սարդարապատի, Ղարաբաղիսայի եւ Բաշ Ապարանի յաղթական պատերազմի կերտումով եւ ինչու չէ, նաեւ մեծ ուժ տուաւ Ղարաբաղեան շարժման: Յեղափոխական-հայրենասիրական շունչով գրուած բանաստեղծութիւններու ու երգերու միջոցով հայ ժողովուրդն ու գալիք սերունդները կը ծանօթանան մեր հայրենի հերոսներուն, կը մօտենան մեր պատմութեան անցքերուն, կը սորվին ու կը լիցքաւորուին հայրենիքի սիրով ու անոր վեհութեամբ:

Յեղափոխական երգերը, որպէս սրբազան ուխտ, որպէս զինուորական երդում, քաջութիւն կը ներշնչէին եւ հաւատ՝ հայ ֆիտայիին ու յաղթանակի կը մղէին անոր: Անցած են տարիներ, եւ այդ տարիներու հետ աճած, մեծցած է նոր սերունդ մը, որ անտեղեակ է, թէ ինչ է պատերազմը, ինչ ամպեր անցած են մեր գլուխէն, սակայն այս երգերը կը շարունակեն հնչել ու յիշեցնել մեր անցեալը, մեր պատմութիւնը, մեզ դրսեւորող ինքնութիւնն ու մեր հայութիւնը:

Եկէ՛ք միասնաբար ուխտենք ու մեր ապագայ սերունդին սորվեցնենք մեր յեղափոխական երգերը, անոնց խոր իմաստն ու կարեւորութիւնը՝ որպէս ազգային ճանաչում, ազգային պայքար ու հայ ազգի յանրաժողով:

**Օգտագործուած աղբիւր՝ երաժշտագէտ, «Գուսան» երգչախումբի խմբավար եւ երգահան
ԳՐԻԳՈՐ ՓԻՏԷՃԵԱՆԻ մէկ բանախօսութիւնը:**

ՁԱՅՆ ՄԸ ՀԵՂԵՑ

Ձայն մը հնչեց Էրզրումի Հայոց լեռներէն,
Թունդ-թունդ ելան Հայոց սրտեր զէնքի շաչիւնէն:

Հայ գիւղացին դարուց ի վեր սուր-զէնք չէր տեսած,
Դաշտը թողուց սուր, հրացան, բահի տեղ առած:

Հայ ծերուկը ցուպը ձեռին լալով խնդրում էր,
Հայրենիքի ազատութիւն տեսնել ու մեռնել:

Հայ տիկինը ստիպում էր ամուսնոյն գնալ,
Պատերազմի դաշտին վրայ՝ վերջ տալ ստանալ:

Քնքոյշ կեանքը ծանր էր թուում Հայ օրիորդին,
Չէն ի ձեռին սիրտ է տալիս Հայոց քաջերին:


Անմիութիւն, տունը քանդող Հայոց խեղճ ազգին,
Հրաժարեցաւ տեղի տուաւ միութեան ձայնին:

Լսեց թուրքը ու սառեցաւ արիւնը վատին,
Չէր երազեր Հային տեսնել նա այդ վիճակին:

Յնձա՛, Մա՛յր մեր, ո՛վ Հայաստան, որդիքդ միացան,
Ութ դարերու սուգ ու թախիծ քեզնից վերացան:

Ուսումն ու լոյս ազատութեան արդ քեզ են ընկեր,
Սուր, հրացան՝ եռանդ ռազմի... պաշտպան անվեհեր:

Ուրախացաւ Մայր Հայաստան, ելաւ կանգնեցաւ,
Հին դարերու սուգ տառապանք մի քիչ մեղմացաւ:



ՉԵՅԹՈՒՆՑԻՆԵՐՈՒ ՔԱՅԼԵՐԳԸ

Խօսք՝ Յարութիւն Չաքրեանի
Երաժշտութիւն՝ Տիգրան Չուխաճեանի

Արեւն ելաւ, Չէյթունցիներ,
Դեհ ձի հեծնենք, առնենք զէնքեր, դիմենք առաջ,
Ինչո՞ւ, ինչո՞ւ գլուխ ծռենք,
Բռնաւորին մեր վիզ պարզած:

Չէյթունցի ենք, մեր սփոփանք,
Էն պատերազմ եւ արշաւանք,
Սուր, թուր, գնդակ եւ հրացան,
Էն խաղալիք մեր յաւիտեան:

Ամբողջ հինգ դար գերի ենք մենք,
Մեր շղթայք մենք պատրաստել ենք,
Ինչո՞ւ այժմէն մենք չստիպենք,
Մեզ գերողին կրելու զայն:

Կեցցե՛ք Չէյթուն, ապրի՛ Չէյթուն,
Թող չտեսնէ ըստրկութիւն,
Քանի ունի մեզ պէս որդիք,
Ապրի Չէյթուն, կեցցե՛ք Չէյթուն:



«Ջէյթունի 1862 թ-ի պաշտպանութիւնը»
(1962 թ., գործ՝ Զուլում Գրիգորեանի)

ԴԱՐՁԵԱԼ ՓԱՅԼԵՑ

Դարձեալ փայլեց Սասնոյ գըլխին՝
Ազատութեան դրօշակ.
Կեցցե՛ Զայրենիք, գոչելով՝
Բարձրացըրին աղաղակ:

Թնդաց որոտաց ձայներից՝
Ողջ աշխարհը հայկական.
Խումբ-խումբ կը գան հայ զաւակներ՝
Զայրենիքին օգնութեան:

Գուրգէն, Վահան, Զրայր-Դժոխք,
Քաջ Անդրանիկ ղեկավար,
Տալուրիկի լեռներումը՝
Շրջում էին անդադար:

Սարսափեցին տուժմանները
Մինչ՝ պալատը Զամիտի-
Զըրամայեց շուտ կործանել
Դիրքերը հայդուկների:

Ահա փախուստ՝ մեր թշնամույն...
Սարսափելի տեսարան...
«Ժամանակ է վըրեժ լուծել...»
Գոչեց ձայնը մարտական:

Կըրակ տեղաց, հայ քաջերի,
Բընակավայր դիրքերից,
Կոտորուեցին թշնամիներ
Ահռելի գնդակներից:



«Սասունի ինքնապաշտպանութիւնը» (1958 թ., գործ՝ Արա Պեքարեանի)

ՄԵՆՔ ԱՆԿԵՂԾ ԶԻՆՈՒՈՐ ԵՆՔ

Մենք անկեղծ զինուոր ենք, առանց ի վիճակ,
Ուխտել ենք ծառայել, երկար ժամանակ,
Պարսկաստանի խորքից՝
Եկե՛լ է նամակ,
Գնու՛մ ենք բարով,
Կ'ուշանա՛նք տարով,
Արի՛նն սուր ու հուր,
Պատերազմի դաշտ, կը սպասե մեզի:

Դու՛մանը մեզ տուեց, "ջան Ֆիտայ" անուն
Այդ անուան համաձայն՝ տեսաւ զօրութիւն,
Մենք չենք ուզել ազատ՝
Կամքի՛ բռնութիւն,
Ուխտե՛լ ենք կռուել,
Այդ սիրո՛վ մեռնել,
Համոզուած ե՛նք, որ միայն զենքո՛վ կայ,
Հային փրկութիւն:

Սթամպուլը պիտի, լինի արեան ծով,
Ամէն կողմից կռիւ, կը սկսուի շուտով,
Կոտորենք Բաճկալայ՝
Անցնի՛նք հեշտ կերպով,
Աջի՛ց Վարդանը,
Զախի՛ց Իշխանը,
Գրաւե՛նք Աղբաք, տարածե՛նք սարսափ,
Փառք ազատութեան:

Բաճկալայ գաւառում, այն պատերազմի,
Աւելի մեծ սարսափ, տիրեց Սուլթանին,
Զաջ Չէյթունը յաղթեց՝
Վատ չար գազանի՛ն,
Կեցցե՛, Չէյթունը,
Խրոխտ Սասունը՝, ազատութիւնը
Բախտաւո՛ր օրեր,
Պարծանք հայ ազգի:

ՁԱՅՆ ՏՈՒՐ, ՈՎ ՖԻՏԱ

Ձայն տո՛ւր ո՛վ ֆիտա, ինչո՞ւ ես տրտում
Լուռ ու մունջ նստած երկար մտածում,
Աւա՛ղ, երկար մտածում,
Տխուր երկար մտածում:

Շարժեցե՛ք, տղե՛րք, սրեր շողշողուն,
Թափեցե՛ք կրակ թշնամեաց գլխուն,
Գազան թշնամեաց գլխուն,
Դաժան թշնամեաց գլխուն:

Թափենք մեր արին իբրեւ ախոյեան,
Լինի առաջնորդ մեր ազատութեան,
Սիրուն մեր ազատութեան,
Անուշ մեր ազատութեան:

Շտապեցեք ընկերք խմբուիլ միատեղ,
Հայկական դրօշ ծածանի այնտեղ,
Թող միշտ ծածանի այնտեղ,
Սիրուն ծածանի այնտեղ:



ԼԵՊԼԵՊԵՃԻՆԵՐՈՒ ԽՄԲԵՐԳԸ

Խօսք՝ Թ. Նալեանի
Երաժշտութիւն՝ Տիգրան Զուխանեանի

Մենք քաջ տոհմի զաւակներն ենք, չենք վախի,
Մանր մուկ փորձանքներից չենք վախի,
Մենք դեռ փոքրուց միշտ սիրել ենք քաջութիւն,
Ինչ էլ որ լինի, չենք հանդուրժի պարտութիւն:

Ուրեմն՝ առաջ, զարկենք թմբուկ յաղթական,
Տանք թշնամուն մենք ծեծ ու ջարդ պատուական,
Թող իմանան՝ մենք չենք դառնայ խաղալիք,
Այնպէս պիտ՝ ծեծենք, որ յիշեն հոր հարսանիք:

Տոհմը մեր եղել է քաջերից քաջը,
Անարգել է կայծակների շառաչը,
Մենք էլ նրա զաւակներն ենք հարազատ,
Էլ ուրիշ ժառանգ չկայ, չկայ մեզնից զատ:

ԿՈՎԿԱՍԻ ԶԱՋԵՐ

Կովկասի քաջեր խմբեր կազմեցեք,
Քաջ Անդրանիկին օգնութեան հասեք
Առած է իր շուրջ ընկերներ ութսուն
Մաքրե ճանապարհ նա դէպի Սասուն:

Հայ պատանիներ շուտով խմբուեցեք
Երբեք մի վախճաք սուրեր շարժեցեք
Հասել է ժամը սուրբ ազատութեան
Կենալու ժամ չէ շուտով քալեցեք:

Քաջ Անդրանիկը անվախ սուր առած
Հայաստան գնալ վաղուց էր երդուած
Աջ ու ձախ ջարդել թուրք զինուորներին
Քիւրտերից մատաղ բերել վանքերին:

Սիրենք միութիւն չանենք վատութիւն
Ունենանք հայեր սուրբ ազատութիւն:



ԻԲՐԵՒ ԱՐԾԻՒ

Իբրեւ արծիւ սաւառնում ես լեռ ու ժայռ,
Թնդացնում ես երկինք երկիր տենչավառ,
Սուրբ անունդ պիտի յիշուի դարե դար,
Հսկայ լեռինք քեզ ապաստան Անդրանիկ:

Թշնամիներդ երբ լսեն քո անունը,
Օճերի պէս պիտ'սողան իրենց բոյնը,
Երակներիդ ազնիւ քաջի արիւնը
Զցամաքի մինչ յաւիտեան, Անդրանիկ:

Հայոց կուսանք դափնեպսակ թող հիւսեն,
Քնքուշ ձեռքով քո ճակատը պսակեն,
Գոհարներով անվախ կուրծքդ զարդարեն,
Կեցցես յաւետ դու, անսասան Անդրանիկ:

Հայաստանի սոխակները քեզ համար
Թող դայլայլեն գիշեր-ցերեկ անդադար,
Անյադթ մնաս դու, քաջութեան սիրահար,
Հայրենիքի տէր ու պաշտպան, Անդրանիկ:

ՀԶՕՐ ԱՆԴՐԱՆԻԿԻՆ


Կովկաս հասաւ սրարշաւ
Մի խումբ ծիաւոր
Թուրք խուժանը խոյս տուաւ
Վախէն ահաւոր
Խումբով կամաւորական
Մտաւ Հայաստան,
Կռուէն դարձաւ յաղթական
Անդրանիկ փաշան:

Կրկներգ... Ճախրէ՛ հզօր Անդրանիկ,
Արծիւ հայկական,
Գրաւուած մեր հողերը
Մուշ Կարս Արտահան
Ազատագրէ սուրովդ
Դարձուր Հայութեան,
Հայրենիքի վեհ պաշտպան
Անդրանիկ փաշա:

Պայծառութեամբդ լուսեղ
Դիւցազն անսասան,
Անմար երազն ես անհուն
Համայն Հայութեան,
Ազգը դեռ քեզ պէտք ունի
Հասի՛ր օգնութեան,
Հայոց պատմութեան հսկան
Անդրանիկ փաշա:

Կրկներգ... Ճախրէ՛ հզօր Անդրանիկ...

Միշտ արշաւէ թշնամուն
Թուրք թէ ազերի,
Սուրբ հետքերէդ թող ծաղկին
Քաջերն հայրենի,
Արցախն ամբողջ անհամբեր
Դարձիդ կը սպասէ,
Վեր կաց օգնութեան հասիր
Անդրանիկ փաշա:



ՀԱՅ ԲԱԶԵՐ

Սասնոյ քաջեր վերցրին զէնքեր
Մահն աչքերին մէջ առած,
Հայոց ազգի կոյս աղջիկներ
Ասկէարներ բռնի տարան:

Կրկներգ... Հայ քաջեր, հայ քաջեր
Ժամն է մեր օրհասական
Հայ կամաւորների կամքով
Պիտ' ազատենք Հայաստան:

Ֆիտայապետ Գեորգ Չաւուշ
Իւր քաջերով անսասան
Իւր կատարած սխրանքներով
Կոչուեց Սարերի Ասլան:

Կրկներգ... Հայ քաջեր, հայ քաջեր...

Սերոբ Աղբիւր Նեմրուտ սարում
Երդուիլ տուեց քաջերուն
Հայրենիքի սիրոյն համար
Կա՛մ մահ, կա՛մ ազատութիւն:



Գեորգ Չաւուշ



ԹԻԿՈՒՆՔԴ ԼԱՅՆ

Թիկունքդ լայն, թելերդ ուժգին,
Կռակդ ամուր պինդ պողպատ,
Սիրել գիտես, կռուիլ չգիտես,
Դու անզգայ երիտասարդ:

Քոյրդ տանում են քիւրտերը,
Եղբօրդ արիւնն են ծծում,
Դու անտարբեր սառն արիւնով,
Հանգստութիւն ես փնտռում:

Ամօթ քեզի, հազար ամօթ,
Որ զէնք չունես քո ձեռին,
Քո եղբայրը կռուի դաշտում,
Տապալում է թշնամին:

Ձեռքդ տուր ինձ, երդուենք այստեղ,
Թողնենք փառքը աշխարհի,
Գնանք, կռուինք առիծաբար,
Ի սեր ճնշուած Հայ ազգին:

ԳԵՈՐԳԻ ԵՐԳԸ

Սուլուխեն ստացանք լուրեր ահաւոր,
Հայոց արծիւն ընկաւ կռուում վիրաւոր,
Կանաչ դաշտի միջին թամամ վեց հոգի,
Մեր սրտերում մնաց յաւերժ թանկագին:

Կրկներգ... Ելի՛ր Գեորգ ելի՛ր, տուշմանը շատ է,
Հայոց ազգի համար մեռնիլը փառք է:

Կտրիճ Գեորգ Չաւուշ դամբանէն վեր կաց,
Մշոյ սեգ սարերէն նորէն իջիր ցած:
Տարօսի քաջերը մենակ են մնացեր
Ազատութեան սիրոյն կռիւ են սարքեր:

Կրկներգ... Ելի՛ր Գեորգ ելի՛ր, տուշմանը շատ է,
Հայոց ազգի համար մեռնիլը փառք է:

Հայոց կտրիճների ճամբէքը փուշ է,
Վե՛ր կաց Գեորգ, վե՛ր կաց, արդէն շատ ուշ է
Կազմենք Նոր-Նոր խմբեր գնանք Մուշ, Սասուն,
Թշնամու զօրքին մէջ գցենք վայնասուն:



ԳԱՐԱՀԻՍԱՐ ԼԵՐԱՆ ԼԱՆՋԻՆ

ՊԵՏՈՂԻ յիշատակին

Գարահիսար լերան լանջին
Նա էլ ընկաւ վիրաւոր՝
Կուրծքը պատռած, սիրտը խոցուած,
Չար թշնամու գնդակով:

Խոցուած սրտից մուգ արիւնը,
Կաթիլ-կաթիլ կը ծորայ...
Ա՛խ, Զիւանու կեանքն է հոսում,
Ցաւոտ կրծքի լայն վերքից...:

Ժեյռոտ լերան լերկ կատարից,
Վա՛ր սլացիր, սեւ արծիւ,
Թեւերդ բաց, լայն թեւերդ
Ու Զիւանուն հո՛վ արա:

Ժեյռոտ լերան լերկ կատարից,
Վա՛ր սլացիր, սեւ արծիւ,
Թեւերդ բաց, լայն թեւերդ
Ու Զիւանուն հո՛վ արա:

ԱՐԴԵՕՔ Ո՛ՎՔԵՐ ԵՆ

Սարերից կ'իջնէ մի խումբ ձիաւոր,
Նրանց մէջ էլ կայ Սերոբ ուխտաւոր:
Արդեօք ովքե՞ր են, ինչ կտրիճներ են,
Մասիսը վկայ, հայոց քաջեր են:

Գեորգ Զաւուշն էր ջահել ու ջիւան,
Անուն էր հաներ՝ Սարերի Ասլան:
Արդեօք ովքե՞ր են, ինչ կտրիճներ են,
Մասիսը վկայ, հայոց քաջեր են:

Անդրանիկը քաջ, իր զօրքերն առաջ
Սասուն երթալու վաղուց էր ուխտած:
Արդեօք ովքե՞ր են, ինչ կտրիճներ են,
Մասիսը վկայ, հայոց քաջեր են:



Սերոբ Արցիկ



ՍԵՐՈՒ ԶԱՆ

Աման ես ինչ տուման է,
Երկիր բոլոր տուշման է,
Հայ ազգի սիրտը քար է,
Սերոբ աչքդ խաւար է:

Կրկներգ... Ելի՛ր, ելի՛ր, Սերոբ ջան,
Ելի՛ր կանգնիր փաշա ջան,
Ձեռդ առ սուր հրացան,
Հայեր կ'երթան գերութեան:

Սերոբ ելաւ դռնէ դուռ,
Զօրք հաւաքեց Շամի դուռ,
Ասաւ. Սօսէ գէնքս տուր
Կորիւն եկաւ, սուրդ տուր:

Կրկներգ... Ելի՛ր, ելի՛ր, Սերոբ ջան,
Ելի՛ր կանգնիր փաշա ջան,
Ձեռդ առ սուր հրացան,
Հայեր կ'երթան գերութեան:

ՎԱՏ ԹՇՆԱՄՈՒ ԳՈՌ ՎԱՇՏԵՐԸ

«Վատ թշնամու գոռ վաշտերը կատաղի,
Պաշարեր են մեր լեռները սոսկալի.
Մի՛ վհատիր քաջ Սասուն,
Քեզ համար չէ նորութիւն,
Մեր պապերից սովորել ենք,
Մեռնիլ քաջամարտի պէս,
Չոր մեզ թողին յիշատակ»:

Շենիք, Սեմալ պաշարուած են թուրքերով,
Տալւորիկի անցքն է փակուեր քիւրտերով.
Չքեզ տեսնեմ քաջ Մուրատ
Սուրդ շարժե անվհատ,
Մեր հեռաւոր եղբայրներ՝
Զեն կենար միշտ անտարբեր,
Շուտով կու գան օգնութեան:



Սեբաստիայի Մուրատ

Հայ աղջիկներ առէք վառօդ եւ կապար,
Լցրէք դատարկ փամփուշտները շար առ շար.
Իսկ դուք կանայք անվհատ,
Առէք սուր ու հրացան,
Խրախուսեցէք հայ քաջեր,
Ազատենք մեր հայրենիք՝
Ձեր կանացի արիւնով:



ՏԱԼԻՈՐԻԿ

**Նուիրուած 1890-ական թուականներու Սասունի
ինքնապաշտպանական մարտերուն**

**Խօսք՝ Միհրան Տամատեանի
Երաժշտութիւն՝ Ժողովրդական
Մշակում՝ Ռուբեն Ալթունեանի**

Տալւորիկի զաւակ եմ դորդ,
Քաղքցու պէս չեմ թուլամորթ,
Սարի զաւակ, քարի որդի,
Հին քաջ Հայոց եմ մնացորդ:

Տալւորիկի զաւակ եմ քաջ,
Չեմ խոնարհիիր թուրքին առաջ.
Քարուտ լերանց եմ ազատ լաճ,
Չեմ տեսել ո՛չ արօր, ո՛չ մաճ:

Կրկներգ... Հայ աղբըրտիք, ջան աղբըրտիք,
Տալւորիկի զաւակ եմ քաջ.
Ազատութեան սիրոյն համար,
Եկէ՛ք դէպ ինձ՝ յառա՛ջ, յառա՛ջ:

Թող այլք բնակին հովիտ ու դաշտ,
Վատ ազգին հետ թող լինին հաշտ,
Ես պիտի մնամ միշտ աննուաճ,
Թէեւ վրաս գան քըսան վաշտ:

Իսկի չքաշեմ բանի մ'կարօտ,
Քանի ունիմ գնդակ, վառօդ,
Ազատ ապրիմ, մեռնիմ ազատ,
Սասնոյ որդին եմ հարազատ:

Կրկներգ... Հայ աղբըրտիք, ջան աղբըրտիք,
Տալւորիկի զաւակ եմ քաջ.
Ազատութեան սիրոյն համար,
Եկէ՛ք դէպ ինձ՝ յառա՛ջ, յառա՛ջ:

Տալւորիկ է սեւ սեւ սարեր,
Խոր մութ ծործորք, սեպ-սեպ քարեր,
Վերել ջուխտակ ծեր Մարաթուն,
Հոգիս մատա՛ղ մեր Մարաթուն:

Մեզնով պարծի այսօր Սասուն,
Մենք ենք խրախոյս Հայոց նկուն,
Տալւորիկ սար, ժեռուտ Չէյթուն
Տան իրարու ազա՛տ ողջոյն:

Կրկներգ... Հայ աղբըրտիք, ջան աղբըրտիք,
Տալւորիկի զաւակ եմ քաջ.
Ազատութեան սիրոյն համար,
Եկէ՛ք դէպ ինձ՝ յառա՛ջ, յառա՛ջ:

ՀԱՃՆՈՅ ԳՈՅԱՄԱՐՏԻ ԵՐԳԸ

Օդանաւն եկաւ մեծ աւետիսով,
Մեր սրտերն լեցուաւ ուրախ յոյսերով,
Թափ առին բոլոր մանուկներն անզէն,
Անոնք ոգեւոր, թուրք ջարդել կ'ուզէն:

Եղբարք Ատանայէն նամակ գրեցին,
Կռուեցէք քաջ դուք, կը հասնինք ըսին,
Սակայն ի՞նչ խաբկանք, օրերը անցան,
Հազար հոգիէն երկուք չերեւցան:

Ապրիլ կամ մեռնիլ վճռեց Հաճընցին,
Գրաւենք ըսին՝ թէկուզ առանձին,
Գրաւենք քանդիչ թնդանօթն ահեղ.
Թող յաղթանակ մը տանինք փառաւոր:

Թէ գերի՞ ապրինք, ապրի՞նք մեր մահով,
Թէ պիտի մեռնի՞նք, իյնանք սուրբ մահով,
Սովին ու ցուրտին ամէն զրկանքին՝
Այլեւս հանդուրժել երկար չենք կարող:

ՆՈՒԱՐԴ Ա. ԱՍՊԵՏ



ԱՏԱՆԱՅԻ ԿՈՏՈՐԱԾԸ

Կոտորածն անգութ, հայերը թող լան,
Անապատ դարձաւ շքեղ Ատանան,
Կրակն ու սուրը եւ անխիղճ թալան
Ռուբէնի տունը ա՛խ, ըրաւ վերան:

Ալ մի՛ տար լոյսդ պայծառ արեգակ,
Լուսին, շուրջ կապէ դուն սուգի մանեակ,
Անցաւ մեր երկրէն հարաւի խորշակ,
Չորցուց, թռմեցուց ծառ ծաղիկ համակ:

Րոպէ մը չանցաւ, ու հայոց խեղճեր,
Ինկած սուրին տակ խուժանին ահեղ,
Ժամեր ու դպրոցք բոցի մէջ կորան,
Բիւրաւոր հայեր անխնայ մեռան:

Անզգայ անօրէն վատը որք թողուց,
Չաւակը մօրմէն, հարսը իր փեսէն,
Ճէվատն անզգամ, Ատիլը գծուծ,
Կերան կշտացան հայու արիւնէն:

Պարապ էր աւա՛ղ, հարուստ Ատանան,
Մոխիր է դարձեր ամբողջ Կիլիկիան,
Կանգուն է միայն Յաճընը սիրուն,
Ինչո՞ւ չի շարժիր ապառաժ Չէյթուն:

ԿԻԼԻԿԻԱ

Երբոր բացուին դռներն յուսոյ
Եւ մեր երկրէն փախ տայ ձըմեռ,
Չըքնաղ երկիրն մեր Արմէնիոյ
Երբ փայլէ իւր քաղցրիկ օրեր,
Երբոր ծիծառն իւր բոյն դառնայ,
Երբոր ծառերն հագնին տերեւ.
Ցանկամ տեսնել զիմ Կիլիկիա,
Աշխարհ՝ որ ինձ ետուր արեւ:

Տեսի դաշտերըն Սուրիոյ,
Լեռնն Լիբանան եւ իւր մայրեր,
Տեսի գերկիրն Իտալիոյ,
Վենետիկ եւ իւր կոնտուլներ,
Կըղզի նման չիք մեր Կիպրեայ,
Եւ ոչ մէկ վայր է արդարեւ
Գեղեցիկ քան զիմ Կիլիկիա
Աշխարհ՝ որ ինձ ետուր արեւ:

Հասակ մը կայ մեր կենաց մէջ,
Ուր ամենայն իղձ կ'աւարտի.
Հասակ մը ուր հոգին ի տենչ
Յիշատակաց իւր կարօտի.
Յորժամ քնարն իմ ցրտանայ,
Սիրոյ տալով վերջին բարեւ.
Երթամ ննջել յիմ Կիլիկիա,
Աշխարհ՝ որ ինձ ետուր արեւ:

ԱՍՊԵՏԱԿԱՆ ՍԵՒ ՍԱՏԱՆԱՆ

Ասպետական, սեւ սատանան,
Կ'ուզէ ամենէլ մեր Կիլիկիան
Մեր Կիլիկիան զենքով առին,
Ուզեն չուզեն ետ պիտի տան:

Եօթը թիթեղ դեղին ոսկի,
Չենք հաւատար թուրքի խօսքին,
Ան որ կ'ըսէ վախկոտ է հայը,
Անոր կու տանք բերնին համը:

Հրաման տուէք, որ կատարենք,
Թուրքին բռնենք, ոտքէն կախենք.
Յետոյ տանենք շուկան ծախենք,
Մարտիկներուն փամփուշտ գնենք:

Մենք Հայերս ենք պատուական,
Քաջեր ունենք մենք Հնչակեան.
Ֆիտայիներ մեզի պաշտպան,
Դարձեալ կ'ուզենք Մայր Հայաստան:



ՄՇԵՑԻ ՄՕՐ ԵՐԳԸ

Խուժան ասկեար զօրք է հանել,
Եկել Մշոյ բերդն է պատել:
Սուլթան կ'ուզի ջնջի մըզի,
Չարթնի՛ր, լաօ, մռնիմ քըզի:

Ինչ անիծեմ թուրք ասկեարին,
Որ սպաննեց Ջոջ Աբոյին,
Մըր յոյս ձգեց օրօրոցից,
Չարթնի՛ր, լաօ, մռնիմ քըզի:

Խեղճ Մշեցին մեռաւ լալով,
Օտար երկրներ ման գալով,
Մեռաւ թուրքին պարտքը տալով,
Չարթնի՛ր, լաօ, մռնիմ քըզի...:

Էլ ինչ ընկնեմ Էլու դռներ,
Երթամ գտնեմ զըմ խեղճ գառներ,
Շինիմ զըմ տուն եւ զըմ էգին,
Չարթնի՛ր, լաօ, մռնիմ քըզի:

ՉԻՆՈՒՈՐԻ ՄՕՐ ԵՐԳԸ

Խօսք՝ Պ. Նաթանեանի
Մշակում՝ Ա. Մնակեանի

Չարթի՛ր, որդեակ, յուշ բեր, վեր կաց,
Պատերազմի փողն հնչեց,
Չարթի՛ր, գոչեց ձայնն հայրենեաց,
Կենաց, մահու ժամ հընչեց:

Պատրաստել եմ քո գէնքերը,
Ահա՛ գըլխիդ վերել կան,
Ինչպէս երբեմն քո գրքերը,
Երբ կ'երթայիր վարժարան:

Փոխան գրքիդ-ահա սուսեր,
Փոխան թղթի կռուի դաշտ,
Գնա՛ մեռիր ազգիդ համար,
Թող մայր-երկիրդ ապրի հաշտ:

Ելի՛ր կապեմ սուրը մէջքիդ,
Ասպար կապեմ քո ուսէն,
Եւ սուրբ դրօշակ հայրենիքիդ
Թող ծածանի աջ թելէդ:

Գրչով ուսար ազգ, հայրենեաց
Գընա՛ սուրով փրկել զայն,
Մեր հայրենեանեաց վշտաց հերի»ք
Զըսաւ աշխարհըն համայն:

Քսան տարի կերակրեցի ,
Մինչ հասակդ այդ առիդ,
Բարձր հասակիդ մայրդ մեռնի,
Դուն ալ քու ազգիդ մեռի՛ր:



ՕՐՕՐՈՑԻ ԵՐԳ

Խօսք՝ Ռաֆայել Պատկանեանի


Արի՛, իմ սոխա՛կ, թո՛ղ պարտե՛զ, մերին,
Տաղերով քու՛ն բեր տղիս աչերին.
Բայց նա լալիս է, դու, սոխա՛կ, մի՛ գալ.
Իմ որդին չուզէ տիրացու դառնալ:

Ե՛կ, արեղածա՛գ, թող արա ու արօտ,
Օրօրէ՛ տղիս, քնի է կարօտ.
Բայց նա լալիս է, դու, ձագու՛կ, մի՛ գալ,
Իմ որդին չուզէ արեղայ դառնալ:

Թո՛ղ դու, տատրակիկ, քու ձագն ու բունը,
Վուժուով տղիս բեր անուշ քունը.
Բայց նա լալիս է, տատրակիկ, մի՛ գալ,
Իմ որդին չուզէ սգաւոր դառնալ:

Կաջաղա՛կ ճարպիկ, գող, արծաթասեր,
Շահի գրոյցով որդուս քունը բեր.
Բայց նա լալիս է, կաջաղակ, մի՛ գալ.
Իմ որդին չուզէ սովորաբար դառնալ:

Թո՛ղ որսդ, արի՛, քաջասիրտ բազէ,
Քու երգը գուցէ իմ որդին կ'ուզէ...
Բազէն որ եկաւ՝ որդիս լռեցաւ,
Ռազմի երգերի ձայնով քնեցաւ:



Ո՛Վ ՀԱՅՈՑ ՄԱՅՐԵՐ

Խօսք՝ Գարեգին Ապարանցի
երաժշտութեան հեղինակ՝ Սրբուհի Քեքեշեան

Ո՛վ հայոց մայրեր, ո՛վ հայոց մայրեր,
Հայոց աշխարհի սուրբ մայրեր (2x)

Խոնարհուում եմ ես ձեր առաջ ու գալիս եմ անձայն ծնկի,
Աղօթում եմ երկնայառած, լոյսի տաճար հայոց մայրեր,
Աչքերիս մէջ քարացել են ձեր ցաւերը բիւր դարերի,
Դուք արեւի լոյսն էք վառած արեւածին հայոց մայրեր:

Ախ հայոց մայրեր, ախ հայոց մայրեր,
Հայոց աշխարհի սուրբ մայրեր (2x)

Արագածն է ծնկի եկել, աղօթում է Մասիսի պէս,
Հայոց մայրեր ուշքի եկէք, ծոցուորուեցէք հայոց մայրեր,
Մաշտոց ծնող մայրը երբեք չի խոնարհուի չարի առաջ,
Այս չարածին չար աշխարհում չարը խեղդէք հայոց մայրեր:

Ո՛վ հայոց մայրեր, ո՛վ հայոց մայրեր,
Հայոց աշխարհի սուրբ մայրեր (2x)

Ձեր տաք սրտի անթեղով ենք մենք վեր յառնել մոխիրներից,
Չուարթնոցի ու Գառնիի խոյակներն էք հայոց մայրեր:
Ծիրանենին պտղաւորուեց ու վեր յառնեց միայն հողից,
Դուք երկնքից պտղաւորուեք ու յոյս ծնէք հայոց մայրեր:

Ո՛վ հայոց մայրեր, ո՛վ հայոց մայրեր,
Հայոց աշխարհի սուրբ մայրեր (2x)

Ելէ՛ք ոտքի, միաձուլուեք, յղիացէք հայոց յոյսով,
Մարաթուկի սուրբ զօրութեամբ Դաւիթ ծնէք հայոց մայրեր
Չօրք չենք ուզում, զօրքն ինչ կ'անենք, զօրավար է մեզ հարկաւոր,
Անդրանիկներ աշխարհ բերէք փրկութեան դուռ հայոց մայրեր:

Ա՛խ հայոց մայրեր, ա՛խ հայոց մայրեր,
Հայոց աշխարհի սուրբ մայրեր....

ԱՐՄԵՆԵԱՆ ՀՈՂ Ա

Երբ որ կործանուեց չքնաղ մեր Անին,
Ենթարկուեցինք մենք օտարի լծին:
Կորել է հովիւը, փռուել է հօտը,
Թուրքին է մնացել Հայոց արօտը:

Կրկներգ... Արմենեան հող ա, երկիրը ծով ա
Սասունը, Մուշն ու Վանը Հայկական հող ա:

Եղիր դու ամեն տեղ, որտեղ մի Հայ կայ
Գուրգուրիր դու նրան, Հայաստան թող գայ:

Կրկներգ... Արմենեան հող ա, երկիրը ծով ա
Սասունը, Մուշն ու Վանը Հայկական հող ա:

Դժուար է, դժուար, ով երկիր ձգեակ,
Որ հայը մնայ օտարի լծի տակ:

Կրկներգ... Արմենեան հող ա, երկիրը ծով ա
Սասունը, Մուշն ու Վանը Հայկական հող ա:



ՄԱՍԻՍ

Ես մեռնիմ են հայ աչքերին,
Որ միշտ նայում են Մասիս սարին,
Ես էլ հեռուից եմ քեզ միշտ նայում
Քո ճերմակ գագաթն եմ համբուրում:

Կրկներգ... Մասիսը տխուր է, Անիս աւերուած,
Կեանքիս կամուրջները ծխում են, այրուած,
Ելք ճամբայ չունեմ ես՝ իմ յոյսն է մարուած,
Ինչպէս ապրեմ ես, ասա՝ Տէր Աստուած:

Ապրում եմ երբ դու գաս իմ սրտում,
Աշխարհում ես իմ տունն եմ փնտռում,
Ուզում եմ մեր ջրիցը խմել
Պապերիս հողում յաւերժ քնել:

Կրկներգ... Մասիսը տխուր է, Անիս աւերուած...

ՍԱՐԴԱՐԱՊԱՏ

Երբ չի մնում ելք ու ճար,
Խենթերն են գտնում հնար:
Այսպես ծագեց, արեգակեց,
Սարդարապատի մարտը մեծ:


Կրկներգ... Չանգեր, դողանջեք,
Սրբազան քաջերին կանչեք
Այս արդար պատից:
Սերունդներ, դուք ձեզ ճանաչեք՝
Սարդարապատից:

Աւարայրից ջանք առանք,
Այստեղ մի պահ կանք առանք.
Որ շունչ առած՝ շունչներս տանք
Սարդարապատի պատի տակ:

Կրկներգ... Չանգեր, դողանջեք,
Սրբազան քաջերին կանչեք
Այս արդար պատից:
Սերունդներ, դուք ձեզ ճանաչեք՝
Սարդարապատից:

Բայց մենք չընկանք, մենք միշտ կանք,
Մենք չյանգանք, դեռ կը գանք,
Երբ տան զանգը, ահագանգը,
Որ մեր հոգու պարտքը տանք:

Կրկներգ... Չանգեր, դողանջեք,
Սրբազան քաջերին կանչեք
Այս արդար պատից:
Սերունդներ, դուք ձեզ ճանաչեք՝
Սարդարապատից:



ԾԻԼ ՄԸ ԾՆԱԻ

Ծիլ մը ծլաւ անապատի ջօլերուն,
Մի փոքրիկ ծիլ, որ պիտ' ծաղկէր աշխարհին:
Գարուն չեկաւ արիւն տեղաց այդ տարին
Անգուր թուրքը մեծ ջարդ տուաւ հայերին
Ծիլը ինկաւ արմատը մնաց մայր հողին:

Հայ արիւնով ոռոգեցինք ծիլն անտէր,
Գարուն եկաւ դարձեալ ծաղկեց ազգը մեր,
Դարձեալ փայլեց մեր երկնքին կապուտակ
Մի նոր արեւ անկախութեան Սուրբ դրօշակ,
Ծիլը դարձաւ ազատ անկախ Հայաստան:



ԵՐԳ ՅԱՂԹՈՒԹԵԱՆ

Հայաստան աշխարհ չքնաղ իմ երկիր
Ֆիտայիներով բազում կռուեցիր
Ազատ Հայաստան ոտքի կանգնեցիր
Ղարաբաղ աշխարհ քեզմով արեցիր:

Կրկներգ... Դեռ մենք պիտ' յաղթենք թուրքին ահռելի
Քաջեր դիմացէք դեռ պայքար ունենք
Յիշենք Անդրանիկ Գեորգ Չաւուշին
Ֆիտայիներին անյաղթ քաջերին:

Դարեր են եկել անցել գնացել
Ոչ ոք իրաւունք Հային չի տուել
Ազատ Հայաստան անկախ իմ երկիր
Արցախեան աշխարհ նորից ետ վերցրիր:

Ահա ազերին փախաւ սարսափած
Թողած դիակներ արեամբ շաղախուած
Կրակ տեղացէք անդադար կրակ
Յառաջ անվեհեր դէպի յաղթանակ:

ԳԵՏԱՇԵՆ

Բազմել ես լեռներին, ունես հազար շեն
Արծիւների բոյնը չքնաղ Գետաշեն,
Բարբարոս ցեղերին անդադար սանձող,
Դու քաջերի օրրան իմ քաջ Գետաշեն:

Կրկներգ... Զորս կողմդ անդունդ է, ճամբերդ փակուած,
Երկնքումդ սեւ ու մութ ամպեր կուտակուած,
Կողքիդ հայկական շէներն են լքուած,
Դու կաս ու կը մնաս յաւերժ Գետաշեն:

Ջահել տղերք դու քիչ ունես Գետաշեն,
Բայց ծերերն էլ ոչ մի բանով պակաս չեն,
Ամեն մի կին մի ֆիտայի տնաշեն,
Քեզ յաղթել չլինի ամրոց Գետաշեն:

Կրկներգ... Զորս կողմդ անդունդ է, ճամբերդ փակուած...:

Դու պիտի դիմանաս ու կանգուն մնաս,
Հակառակ թշնամուն պիտի դիմանաս,
Մայր Հայաստանին պիտի միանաս,
Արցախի դարպասն ես ամրոց Գետաշեն:

Կրկներգ... Զորս կողմդ անդունդ է, ճամբերդ փակուած...:

ԳԵՏԱՇԵՆ
GETASHEN

Ժող - մեկ եւս փո - ճե - րքն ու - ճեւ հաւ - դար շեն.
haz - mel es ler - ne - rin u - mel ha - zar shen.

Այս - ծիւղ - մե - րի քայքայն հա շնք - մաղ Գե - տա - շեն,
az - tsiw - me - ri k'aykayn es shnq - magh Ge - ta - shen.

Ժող - քա - ղա - րի ցե - րե - րքն աճ - քա - դար տաճ - ճաղ,
haz - ka - ra - ri tse - rere - rin aad - da - dar tan - dazgh.

Գեւ - քա - րե - րի օր - րան իմ քաղ Գե - տա - շեն:
geu - ka - re - ri or - ran im k'aj Ge - ta - shen.

Զորս կող - մդ աճ - դունդ է ճամ - քե - րդ փակ - վաժ,
shars k'ogh - mel aad - dunnd e dam - qere - rd' phak - vash.

Եր - կնք - քաղ տե - ու ճաղ աճ - պեր կա - տակ - վաժ:
yer - knk - k'ad tse - u dazgh aad - per ka - tak - vash.

Հե - ղեղ հայ - կա - կան, շե - ճեքն եմ լք - վաժ
he - qel hay - ka - kan, she - dshkn em lkh - vash.

Գեւ կաւ ու կն - վը - մաւ հա - վաժ Գե - տա - շեն:
geu kas u kn - vel - mav ha - vash Ge - ta - shen.

ՂԱՐԱՔԱՂՑԻՆ

Պատուել գիտի միշտ իր հիւրին,
Գիտի գինը աղ ու հացի,
Միշտ հիւրասէր ու միշտ բարի,
Միշտ սրտաբաց ղարաբաղին:

Կրկներգ.— Ղարաբաղին, ղարաբաղին, ղարաբաղին:
Ուր էլ լինես իմ բարեկամ,
Դու նրա հետ ընկերացիր,
Վատ ընկերոջ համար անգամ,
Կեանքը կը տայ ղարաբաղին:

Կռուում լինի՝ աշխատանքում,
Խիզախում է ինչպէս արծիւ,
Վաստակն արդար, խիղճը մաքուր,
Արդարադատ ղարաբաղին:

Կրկներգ.— Ղարաբաղին, ղարաբաղին, ղարաբաղին...

Մշակ է նա ու շինարար,
Բայց հասարակ մարդ մի կարծիր,
Գիտնական է ու զօրավար,
Բազմավաստակ ղարաբաղին:

Կրկներգ.— Ղարաբաղին, ղարաբաղին, ղարաբաղին...

Խաղաղ է նա համբերատար,
Բայց թէ հոգով դու դառնացրիր,
Ամպի նման կը որոտայ,
Շանթ ու կրակ ղարաբաղին:



ՀԱՅԵՐ ՄԻԱՑԷՔ

Հսկայ երկիր էր Հայաստանը մեր,
Բայց ինչքա՛ն ասես՝ թշնամի ուներ.
Բոլոր կողմերից, հեռու, դրացի,
Ձեռք-ձեռքի տուած մեզ բզքտեցին:

Կրկներգ... Ու Թուրքն էլ վայրագ, օգտուեց առիթից
Կոտորեց ազգս, տիրացաւ երկրիս:
Հայեր միացէ՛ք, միացէ՛ք հայեր,
Արցախն է մեզ կանչում, օգնութեա՛ն հասէք.
Դեռ ճամբայ ունինք, պիտ' հասնինք Սասուն
Քաջերի հողը մեզ է սպասում...

Ա՛խ, Նախիջեւան, հայոց բնօրրան,
Անթիւ թշնամինք եկան անց կացան...
Քեզ բաժին ընկաւ սեւ բախտը դաժան,
Թուրքին տրուեցաւ, հո՛ղ պապենական:

Կրկներգ... Ու Թուրքն էլ վայրագ, օգտուեց առիթից
Կոտորեց ազգս, տիրացաւ երկրիս:
Հայեր միացէ՛ք, միացէ՛ք հայեր,
Արցախն է մեզ կանչում, օգնութեա՛ն հասէք.
Դեռ ճամբայ ունինք, պիտ' հասնինք Սասուն
Քաջերի հողը մեզ է սպասում...

Պայծառ գալիք է, սպասում հային,
Այս դժուար պահին լինենք միասին,
Չի հանգստանում մեր նենգ թշնամին,
Ուզում է նորից կոտորել հային:

ՂԱՐԱԲԱՂԻ ՉՈՅՈՒԱԾՆԵՐԻՆ

Լերան լանջին խոր նիրհում են ֆիտայիներ յաւիտեան,
Ազատ քնել միշտ սիրում են զաւակները Յայութեան,
Եկեք գնանք Յայ աղջիկներ հասնինք այնտեղ ձիգ լերան,
Ազգիս պաշտպան ֆիտայիներ մեզի համար քուն մտան:

Հասնենք քաջաց Սուրբ գերեզման, թափեն արցունք աչքերնիս
Մեր հայրենեաց հողին պաշտպան զարկուեցաւ քաջերից
Ահա հասան հայ օրիորդներ, երգենք մեղմիկ միասին,
Ցանենք ծաղիկ եւ վառենք խունկ, յարգանք նրանց Սուրբ շիրիմին:

Հիւսենք պսակ նրանց գլխին՝ վարդ, մանուշակ, մեխակից,
Երդուենք նրանց յիշատակին չվախենալ տաճիկից,
Մեզի համար զոհ գնացին Հնչակեան քաջ ֆիտաներ,
Որ ննջում են Ղարաբաղի ազատութեան մարտիկներ:



ՉՈՅՈՒԱԾՆԵՐԻՆ

Դաժան կռուում դուք ընկաք,
Ջահել սիրուն տղաներ,
Յետոյ կռուից տուն եկաք,
Որպէս արձաններ,
Ա՛խ, ինչե՞ր կ'ասեք, թէ խօսեք:

Կրկներգ... Զար էք դարձել կրանիդ,
Բայց մենք չունենք քարէ սիրտ,
Դուք մեր սրտում, մեր մէջ էք,
Մենք ձեզ երբեք չենք մոռանայ,
Ու միշտ կը յիշենք:

Մայրեր կան ձեզ սպասող,
Զոյր եղբայրներ կարօտով,
Իսկ դուք վշտից քարացած
Համբոյր չտեսած,
Ա՛խ, ինչե՞ր կ'ասեք, թէ խօսեք:

Կրկներգ... Զար էք դարձել կրանիդ...



ԿԱՐՄԻՐ ԿԱԿԱՉՆԵՐԸ

Գնացին տղերքը ու կորան հեռում,
Ռումբերի պայթիւնը սարերն է շարժում,
Կարմիր կակաչները ներկել են դաշտերը,
Ասես լեռներից մեր արին է հոսում:

Հեռացան տղերքը, կորան մշուշում,
Ետ գալու ճամբան էլ ոչ ոք չի յիշում,
Իսկ ձեր եղբայրները, մայրերն ու քոյրերը,
Ձեր սիրելիները ձեզ են դեռ սպասում:

Իսկ դու շորորում ես, հողի հետ ճկում,
Ու՞ր է քո գարունն, ինչո՞ւ է ուշանում:
Դու իմ խնձորենի, իմ քոյրիկ նազելի,
Սիրածդ՝ գարունը ո՞ւր է, չի գալիս:

Գնացին տղերքը ու կորան հեռում
Ռումբերի պայթիւնը սարերն է շարժում,
Կարմիր կակաչները ներկել են դաշտերը,
Ասես լեռներից մեր արին է հոսում:

Դու ասես հարբել ես տաք գարնան ծոցում,
Հողի հետ նազում ես, հողի հետ խօսում,
Ծաղկած խնձորենի, իմ քոյրիկ նազելի,
Փեսացուդ՝ գարունը քեզ մօտ է գալիս:



Հեռացան տղերքը, կորան մշուշում,
Ետ գալու ճամբան էլ ոչ ոք չի յիշում,
Իսկ ձեր եղբայրները, մայրերն ու քոյրերը,
Ձեր սիրելիները ձեզ են դեռ սպասում:

Ծաղկած խնձորենի, իմ քոյրիկ նազելի,
Փեսացուդ՝ գարունը քեզ մօտ է գալիս:

ԵԿԷՔ ՏՂԵՐՔ ՄԻԱՍԻՆ

Մասիսի պէս դու կանգնած
Ուժ ես տալիս Արցախին,
Թեւերիդ տակ ես առել
Ինչպէս մայր իր զաւակին:
Թուրքը կ'ուզէ արին թափել
Որ բաժանուես նորից դուն:
Չենք թողնիր քանի Հայ ենք
Կը ջարդենք վատ թշնամուն

Կրկներգ... Եկէ՛ք տղերք միասին
Երթանք մարտիկներ դառնանք,
Կռուենք Սուրատի շունչով
Մեր Արցախին տէր դառնանք:

Մենք փոքրուց միշտ լսել ենք
Որ հալածուած ազգ ենք հին
Բայց հիմա ստիպուել ենք
Կռուել զէնքը մեր ձեռին
Անուններ են մեզ տուել
Գեորգ, Ջելլօ, Զաջ Սուրատ
Գրոհի ժամն է հնչել
Հասնենք տղերք մարգարաշտ:

Կրկներգ... Եկէ՛ք տղերք միասին
Երթանք մարտիկներ դառնանք,
Կռուենք Սուրատի շունչով
Մեր Արցախին տէր դառնանք:

Հերիք տեսանք մենք Հայուն
Արին սուր ու չարչարանք
Ազգովին պայքար դառնանք
Յանուն մեր Սուրբ հողերուն
Նոր Վանիկներ թող ծնուեն
Ազգին պաշտպան թող կանգնեն
Կրակների մէջ ինկող
Մեր Արցախը ազատեն:

ՓՐԿԵՆՔ ԱՐՑԱՆ

Փրկենք Արցախ, սուրբ արիւնով,
Ուխտեցին քաջ մարտիկներ,
Մեծ Սուրատի կտրիճ խումբով,
Արշաւեցին անվեհեր:

Չով գիշերուան մեջն արթուն,
Խաչիկ դիրքեր կը հսկեր,
Հնչակեան հայ կտրիճներուն,
Վաղուան կռուին կ'աղօթէր:

Ափսոս չկար Սուրենն արի,
Մեղրի գաւառն էր տխուր,
Նահատակուած էր քաջարի,
Մեր Նինուատը փրկելու:

Դիւցազնական այդ մեծ մարտին՝
Քելբաջարի սարերուն,
Հերոս Խաչիկն ալ զոհ տուինք
Գազան ագերիներուն:

Վեհ ընկերներ յաւերժ ապրէք
Սուրբ հողին վրայ արցախեան,
Ձեր արիւնով դուք կերտեցէք,
Հայոց պայծառ ապագան:



Մեծ Սուրապ

ԵՐԿԻՐ ՀԱՅՐԵՆԻ

Խօսք եւ երաժշտ.՝ Ռ. Ամիրխանեանի

Երագի իմ երկիր հայրենի,
Հոգսերդ շատ, յոյսդ մեծ,
Քարքարոտ երկիր:

Ես մի բուռն եմ քո հողի,
Ես մի ծիլն եմ քո արտի,
Ես մի թերթն եմ քո ծաղկի,
Հայրենի երկիր,
Հայաստան:

Երագի իմ երկիր հայրենի,
Հոգսերդ շատ, յոյսդ մեծ,
Արծուաբոյն երկիր:

Իմ պապերն են քեզ շահել,
Իմ եղբայրքն են քեզ պահել,
Քոնն են որդիքն իմ ջահել,
Հայրենի երկիր,
Հայաստան:

Ես մի բուռն եմ քո հողի,
Ես մի զարկն եմ քո բազկի,
Ես մի շիւղն եմ քո հասկի,
Հայրենի երկիր,
Հայաստան:



ՊԱՏԵՐԱԶՄԻ ԷՔ ԳՆՈՒՄ

Պատերազմ էք գնում, բարով գնացէք.
Քաջերի արիւնն է ձեր մէջ, իմացէ՛ք.
Մեր նոր կազմաւորուող Հայոց բանակի,
Առաջին զինուորն էք, բարով գնացէ՛ք:

Կրկնէրգ... Որքան էլ որ դժուար լինի, դիմացէ՛ք.
Վախկոտն ամէն օր է մեռնում, իմացէ՛ք.
Քաջերը մեր ընկան՝ փառքով, իմացէ՛ք,
Հողը արիւնով են փրկում, իմացէ՛ք:

Քաջերի կորուստով, ցաւել ենք դարեր.
Հողերի կորուստով՝ հազար ամեակներ.
Այժմ շատ են պէտք մեզ յաղթանակներ
Դէպ՝ փառք ու յաղթանակ, բարով գնացէ՛ք:

Կրկնէրգ... Որքան էլ որ դժուար լինի, դիմացէ՛ք...

Դուք մեր նախնեաց հողը նորից ետ բերէք.
Մեր Հայկազեան փառքը նորից ետ բերէք.
Մուշն ու Սասուն, Արարատը ետ բերէք.
Դէպ՝ Արցախ, Մուսայ լեռ, բարով գնացէ՛ք:

Կրկնէրգ... Որքան էլ որ դժուար լինի, դիմացէ՛ք...

ԱՆՊԵՐՍ ՈՒ ԵՍ

Խօսք եւ երաժշտութիւն՝ գուսան Տոտիկ

Անօրէն թուրքն է տիրել մայր հողին,
Ինչ սրտով պիտի մտնենք անկողին...
Մամ ջան չտխրես, շատ չմտածես,
Կռիւ ենք գնում ախպերս ու ես...

Մռայլ գիշերն է, նստած ենք փոսում,
Այստեղ հայ քաջի արիւնն է հոսում:
Եկել ենք կռիւ, կռում ենք այսպէս,
Խփում ենք թուրքին ախպերս ու ես...

Երբ լուսաբացին թուրքը լեռն է սողում,
Մեր գիլ հարուածից աշխարհն է թնդում,
Ինչքան պետք լինի՝ կը կռուենք այսպէս,
Յայ ազգի համար ախպերս ու ես...

Էլ ետ-դարձ չկայ կռիւ է սաստիկ,
Օրինանքդ տուր մեզ ու մի լար մայրիկ...
Թէ մի օր կտրիդ զոյգ արծիւ տեսնես,
Էդ մեր հոգիքն են՝ ախպերս ու ես...

Մամ ջան կը բացուեն դռները մեր գոց,
Ոսկի կը հագնի սեւ օրն հայոց...
Ու տուն կը դառնանք յաղթութեամբ եսպէս,
Ծափով-ծիծաղով... Ախպերս ու ես...:

Այս երգի խօսքերի եւ երաժշտութեան հեղինակը գուսան Տոտիկն է՝ Աշոտ Բեգդեան:
Երգը գրուած է 1993 թուականին՝ Մարտակերտի Յակոբ Կամարի գիւղի ազատագրման
ժամանակ: Յարգարժան գուսանը, որ, ի դէպ, հայրենասիրական շատ երգեր գրած է, այս
երգը նուիրած է՝ մայրը Գնել Շահնազարեանին եւ անոր եղբօր Ռուսնտին: Երգը բազմիցս
մեկնաբանուած է, սակայն անկրկնելի եւ անմոռանալի է առաջին կատարումը Յակոբ
Կամարի գիւղի Լուլասարի բարձրունքէն: Այս երգի ստեղծումէն յետոյ արդէն, երբ երկու
եղբայր կը պատրաստուէին ռազմի դաշտ մեկնիլ, կը փաթթուէին իրենց մօր ու կ'երգէին.

- Մամ ջան, չտխրես, շատ չմտածես,
Իսկ մայրը իրենց հետ կ'երգէր ու վերջին տողը կը փոխէր այսպէս՝
- Պատուով ետ կը գանք, ախպերս ու ես:

ՊԻՏԻ ԳՆԱՆՔ

Խօսք եւ երաժշտութիւն՝ Գուսան Հայկազունի
(Գագիկ Նազարեան)

Ախ են երկրի հողին մատաղ,
Սիրով լինի, սրով լինի,
Արարատի գլխին դո՞շ
Հերթով լինի, երթով լինի,

պիտի՛ գնանք վաղ թէ ուշ,
պիտի՛ գնանք վաղ թէ ուշ,
պիտի՛ դնենք վաղ թէ ուշ,
պիտի՛ գնանք վաղ թէ ուշ:

Կորցրեցինք մեր հողերը,
Բահ ու գրիչ շատ սիրելուց
Յոյսը դրինք արդարութեան՝
Խաչով լինի, գրչով լինի՝

երբ մեր ազգը թուլացաւ,
զէնք բռնելը մոռացանք,
սրի դերը ուրացանք,
պիտի՛ գնանք վաղ թէ ուշ:

Դրա համար պայքար է պետք,
Սրով խլուած հողը,
Ուժն է յարգի, լա՛ւ իմացեք,
Սիրով լինի, սրով լինի,

ուրիշ ճամբայ չե՛մ տեսնում,
սիրով տիրոջը չեն նուիրում,
թոյլ ազգերին չեն սիրում,
պիտի՛ գնանք վաղ թէ ուշ:

Հայկազուն եմ՝ չեմ վախենում
Հալածանքից, բռնութիւնից,
Թէկուզ անանց պարիսպներով
Հրով լինի, սրով լինի,

մարդկութեան նենգ դաւերից,
Աստծոյ տուած ցաւերից,
մեզ բաժանեն մեր երկրից,
պիտի՛ գնանք վաղ թէ ուշ:

Հայ զաւակ եմ հաւատում եմ,
Եաթաղանի լեզուն կտրող,
Մենք չտեսնենք, մեր որդիքը,
Հրով լինի, սրով լինի

իմ երկիրը կը տեսնի,
հայոց ձեռքը կը տեսնի,
թոռից թոռը կը տեսնի,
պիտի գնանք, վաղ թէ ուշ:

*** Վերջին տունը անելցուած է Ներսիկ Իսպիրեանի կողմէ**



Լուսանկարներ՝ ՆԱԶՈ ՃԵՐԵՃԵԱՆԻ

ՄԵՐ ԱՆՈՒՆՆ Ե ԶԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

Օրնիբուն դրում է հին քարին նոր քարը,
Եւ անունն է մեր հայ շինարար,
Նոր գարուն իր հետ բերում է ցանքն ու վարը,
մեր անունն է հայ մշակ արդար,
Պետք է իմանայ մանուկն իր գիրն ու տառը,
որ ապրի հայ միտքը դարե-դար,

Կրկներգ... Մեր սրտերը միշտ ամուր են, հուր են,
Մեր թրերը միշտ ամուր են, սուր են,
Եւ թող իմանան բոլորը՝
Մեր անունն է ԶԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ:



Հայ հազարամեայ մեր պատմութեան տապանը
մեզ տարուբերել է աշխարհով,
Ետ է մեզ կանչում մեր հարազատ օրանը՝
միշտ հաւատարիմ իր կարօտով,
Մերն է լինելու այս նոր հարիւրամեակը՝
վառ լուսաւորուած ճանապարհով,

Կրկներգ... Մեր սրտերը միշտ ամուր են, հուր են...

Մեր պապենական, մեր հայկական հողերը
մենք գիշերուզօր կը պահպանենք,
Թող հանգիստ քնեն հայոց բոլոր մայրերը,
մենք նրանց անդորրը կը հսկենք,
Հայկ նահապետի մեզ աւանդած երկիրը
մեր զաւակներին կը ժառանգենք,

Կրկներգ... Մեր սրտերը միշտ ամուր են, հուր են...

Հայ հազարամեայ մեր պատմութեան կնիքը
մենք յաւերժ կրում ենք դարեդար,
Թող որ միշտ խաղաղ լինեն հայոց երկինքը
Եւ տները մեր արեւավառ,
Եթէ պահանջուի անգամ կը տանք մեր կեանքը՝
մեր հայրենիքի փառքի համար,

Կրկներգ... Մեր սրտերը միշտ ամուր են, հուր են

Եւ մեր անունն է ԶԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ...

ՀԱՅԿԱԿԱՆ, ՈՉ ԹԵ ՀԱՍԱՐԱԿ

Հայրենիք, անկախ եւ ազատ
Հայրենիք, իմ մայր հարազատ
Չաւակներդ հզօր անվեհեր
Հսկում են լեռների ալեհեր
Որդիները անվախ Չաւուշի,
Նժդեհի, Անդրանիկի:

Քայլ ա՛ռ առաջ քայլերդ շիտակ
Քայլերդ շիտակ, քայլերդ շիտակ
Չինուոր ես դու ու եկել ես բանակ
Հայկական, ո՛չ թէ հասարակ:

Հայկազուն գինուոր փառաւոր
Հայկի պէս եղիր զօրաւոր
Պապերիդ ու փառքիդ արժանի
Նրանց պէս հպարտ ու քաջարի
Չթողնես մօտենայ թշնամին
Մեր հողին մեր սահմանին:

Քայլ առ առաջ քայլերդ շիտակ
Քայլերդ շիտակ, քայլերդ շիտակ
Չինուոր ես դու ու եկել ես բանակ
Հայկական, ո՛չ թէ հասարակ:



ԵՐԳ ՎԱՐԴԱՆԱՅ

Խօսք՝ Ռաֆայել Պատկանեան
Երաժշտ.՝ Ն. Շահլամեանի



Լռեց: Ամպերը եկան ծածկեցին
Երկինքն ու լուսինն աչքես խլեցին.
Մնացի մենակ՝ հոգիս վրդոված,
Ձեռներըս ծոցիս, գլուխս քարշ արած:

Եւ այնուհետեւ ամէն իրիկուն
Մընում եմ լուսնի խաղաղ ծագելուն.
Նորայ տըխրամած դեմքը նայելիս՝
Յիշում եմ թըշվառ վիճակը ազգիս:

Ա՛խ, ցուլ՝, փայլէ՛, տըխրադեմ լուսին,
Գուցէ քու փայլից փայլ տաս եւ հային...

Պատմէ շատերուն Վարդանի մահը,
Կամ՝ ինչպէս կորաւ հայ ազգի գահը,
Կամ ինչ վեհ սիրով սիրում էր Վարդան
Մայրենի հողը- աշխարհ Զայաստան:



ՎԱՐԴԱՆ

Իմ Զայրենեաց հոգի Վարդան,
Յոգիս հոգւոյդ եղնի դուրպան.
Որ Տղմուտի ափերի քով,
Վաթսուն հազար կտրիճներով
Չարկիր, զարկուար, ինկար քաջ-քաջ
Պարսիկ սփռած ի ձախդ ու յաջ:

Աւետարանն ու Խաչն առիր,
Տարիր յերկինս բարձրացուցիր,
Եւ դուն ալ հետ թողիր գացիր,
Անուշ արեւդ հողին տուիր,
Որ Զայրենեաց շողայ արեւ
Շաւարշանայ դաշտին վերեւ:

Արիւնդ կարմիր-կարմիր թափուաւ,
Դաշտ ու ծաղիկ ներկուեցաւ,
Լուսնակն ելաւ ամպի տակից,
Պաղ պաղ թափեց ցօղիկն յաչից,
Որ Զայրենեաց վարդեր բացուին,
Պլպուլն երգէ դրախտի սարին:

ՀԻՄՈՒ ԵՆ ԼՌԵՆՔ

Խօսք՝ Ռաֆայել Պատկանեան

Հիմի Է՛լ լռենք, եղբարք, հիմի Է՛լ,
Երբ մեր թշնամին իր սուրն է դրել,
Իր օրհասական սուրը՝ մեր կրծքին,
Ականջ չի դնում մեր լացուկոծին:
Ասացէ՛ք, եղբարք հայեր, ի՞նչ անենք,
Հիմի Է՛լ լռենք:

Հիմի Է՛լ լռենք, երբ մեր թշնամին
Դառով, հրապուրքով
տիրեց մեր երկրին,
Ջնջեց աշխարհից Հայկայ անունը
Հիմքից կործանեց Թորգոմայ տունը:
Խլեց մեզանից թա՛գ, Ե՛ւ խօսք, Ե՛ւ գէնք,
Հիմի Է՛լ լռենք:

Հիմի Է՛լ լռենք, երբ մեր թշնամին
Խլեց մեր սուրը -
պաշտպան մեր անձին,
Մշակի ձեռքիցն էլ խոփը խլեց,
Այդ սուր ու խոփից մեր շղթան կռեց:
Վա՛յ մեզ, շղթայով կապուած գերի ենք,
Հիմի Է՛լ լռենք:

Հիմի Է՛լ լռենք, երբ մեր թշնամին
Սոսկալի գէնքը բռնած մեր գլխին՝
Կուլ տալ է տալիս արտասուք առատ՝
Աղէխարշ բողոք վարուց ապիրատ:
Մեր գլուխ լալու Եփրատ
ո՛ւր փնտռենք,
Հիմի Է՛լ լռենք:

Հիմի Է՛լ լռենք, երբ մեր թշնամին
Լիրբ գոռոզութեամբ լցրած իր հոգին՝
Արդարութեան ձայնը հանած իր սրտից՝
Արտաքսել է մեզ մեր բնիկ երկրից:
Պանդո՛ւխտ, հալածեալ եղբարք
ո՛ւր դիմենք,
Հիմի Է՛լ լռենք:

Հիմի Է՛լ լռենք, երբ մեր թշնամին
Անհոգ մեր բերած ծանր գոհերին,
Իւր լիրբ նզովեալ ձեռքը կարկառեց,
Ազգութեանս վերջին կապը պատառեց:
Հայի կորուստը մօտ է, ի՞նչ անենք,
Հիմի Է՛լ լռենք:

Հիմի Է՛լ լռենք, երբ մեր թշնամին
Արհամարհելով մեր փառքն ազգային,
Մեր եկեղեցուն ձեռնամերձ եղաւ,
Գառնազգեստ գայլին մեզ գլուխ դրաւ:
Սուրբ խորան չունենք,
արդ ո՛ւր աղօթենք,
Հիմի Է՛լ լռենք:

Հիմի Է՛լ լռենք, մարդիկ ի՞նչ կ'ասեն,
Երբ մեր տեղ քարինք,
ապառաժք խօսեն,
Չե՛ն ասիլ, որ Հայք արժանի էին
Այդ ըստրկական անարգ վիճակին:
Մեր սուրբ քաջ նախնեաց
գործերը գիտենք,
Մինչեւ ե՛րբ լռենք:

Թո՛ղ լռէ մունջը, անդամալոյծը,
Կամ՝ որոնց քաղցր է թշնամու լուծը,
Բայց մենք որ ունինք հոգի ու սիրտ քաջ՝
Ե՛կ, անվախ ելնենք թշնամու առաջ:
Գոնէ մեր փառքը մահով հետ խլենք.
Ու այսպէս լռենք:

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՐԳԵՐ

الحق ما ييموت

لبنان جنة مقدسة
او عا تخاطرو فيها
هيدي وصية مكرسي
ومجد الرب حاميتها
الانبيا مشيو
على تراباتها (3x)
والارز فوق جبالها
حامي شواطئها (2x)

لبنان راح يرجع ... والحق ما ييموت
والشمس راح تطلع ... تزين سما بيروت

من هون ما منفل
حصرم بعين الكل
بها الارض بدنا نضل
لو بقي خمس بيوت

لبنان راح يرجع ... والحق ما ييموت
والشمس راح تطلع ... تزين سما بيروت

لا نقول بدي روح
ونترك وطن مجروح
والروح لما تروح
الجسد بدو يموت

لبنان راح يرجع ... والحق ما ييموت
والشمس راح تطلع ... تزين سما بيروت

غناء : جوزيف عطيه

راجع يتعمر لبنان

راجع راجع يتعمر .. راجع لبنان
راجع متحلي وأخضر أكثر ما كان
هلا يابا .. هلا يابا راجع لبنان
يا زنود اللبنانية شدي معنا
ع الدبكة وع الغنية رجعنا رجعنا
نحننا صفينا النية والله معنا
دبكتنا انسانية وعونة أخوان
هلا يابا .. هلا يابا راجع لبنان
دبكتنا عونة أخوة صورة ومضمون
صورتنا همة ونخوة تفرح العيون
فيها البسمة اللي بتضوي القلب المحزون
بعيون الغاضب قوة ترد العدوان
هلا يابا .. هلا يابا راجع لبنان
رجعنا الساعد بالساعد مشبوك منيح
ومشينا مشية ماردي يضحك للريح
طلتتنا الكرم الواعد بعدو تلاويح
يبشر بالصيف الوارد موسم حزران
هلا يابا .. هلا يابا راجع لبنان
راجع راجع يتعمر .. راجع لبنان
راجع متحلي وأخضر أكثر ما كان
هلا يابا .. هلا يابا راجع لبنان

كلمات: زكي ناصيف
ألحان: زكي ناصيف

لبناني

غطى الشمس بفي جبينك ببحقك وطنك دينك
لو هالدنيا سالت مينك قلن انك لبناني
بطل السلم وبطل الحرب همزة وصل الشرق الغرب
تضل تحب وتتحب بيكفي انك لبناني.

لبناني ومطر ح ماطروح حامل وطنك قلب وروح
ومنك عطر المجد يفوح عطر تراب اللباني
لبناني وكل ماطل توزع حبك عالكل
والايدين عليك تدل وتعرف انك لبناني.

لبناني واسمك مكتوب عدد السيف المسحور
لون حروفه حبر قلوب كلمة واحدة لبناني
لبناني وتسلم هالايد اللي بتعرف تعطي وتزيد
وتخلق بعد الازمة عيد وعيد المجد اللباني.

الملحن : عاصي الحلاني
الكاتب : نزار فرنسيس
غناء : عاصي الحلاني



ՄԵՐ ԿԵԱՆՔՆ Է ՀՈՍ

نحن هون منعيش

نحن هون منعيش نحن هون منموت
نحن خلقنا نؤار وأحرار
ويا لبنان خليك منضخي تنعليك
دم بيرخص كرمالك يا لبنان.

نحن هون منعيش نحن هون منموت
سوا منبني ومنعمر لبنان
منخلبك و منحب يا وطننا بالقلب
نحن الأرمن ونحن لبنان.

Մեր կեանքն է հոս, մեր տունն է հոս,
Մենք ծնած ենք ազատ եւ ըմբոստ
Կը զոհուինք որ դուն յաւետ բարձրանաս,
Լիբանան մեր արիւնը Զեզ ընծայ:
Մեր կեանքն է հոս, մեր տունն է հոս,
Միասին կառուցենք Լիբանան
Սրտով եւ հոգով թեզ կը սիրենք
Հայ ենք մենք Լիբանան ենք նաեւ մենք:

من الظلم جينا واحملنا ماضيها
عرفنا معنى الشهادة والغفران بيروينا
ومشينا لهون وجينا وتركنا اغانيها

نحن هون منعيش نحن هون منموت
نحن خلقنا نؤار وأحرار
يا لبنان خليك منضخي تنعليك
دم بيرخص كرمالك يا لبنان.

نحن هون منعيش نحن هون منموت
سوا منبني ومنعمر لبنان
منخلبك و منحب يا وطننا بالقلب
نحن الأرمن ونحن لبنان.

نحن القلب النابض من قلب المدينة
منرفض الإهانة ونكره الضغينة
بيخكو عنا ويقولو ويقولو
مع هالشعب الصامد عم نخلق من جديد